

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁՆ ԱՊՂՅՈՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

նշելով, որ ավտոտրանսպորտային միջոցների հափշտակությունը զգալի վնաս է հասցնում ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերին եւ Կողմերի պետություններին,

մտահոգություն հայտնելով, որ ավտոտրանսպորտային միջոցների հափշտակությունը ձեռք է բերել վերազգային բնույթ,

ընդունելով, որ ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության դեմ արդյունավետ պայքար հնարավոր է միայն Կողմերի բոլոր շահագրգիռ

նախարարությունների եւ գերատեսչությունների փոխգործակցության հիման վրա,

գիտակցելով ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումը կանխելու եւ դրանց վերադարձն ապահովելու համար համաձայնեցված միջոցներ իրականացնելու անհրաժեշտությունը,

ղեկավարվելով միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով եւ նորմերով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար օգտագործվում են հետեւյալ տերմինները.

ավտոտրանսպորտային միջոց՝ մարդկանց, բեռների փոխադրման համար նախատեսված մեխանիկական սարք կամ դրա վրա տեղադրված սարքավորումներ եւ մեխանիզմներ, այդ թվում՝ կցասայլակներ, կիսակցասայլակներ եւ մոտոցիկլետներ,

ավտոտրանսպորտային միջոցի հափշտակություն՝ Կողմերի ազգային օրենսդրության համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցի ցանկացած անօրինական, քրեորեն պատժելի տիրում,

ավտոտրանսպորտային միջոցի պահպանվածություն՝ ավտոտրանսպորտային միջոցի ամբողջական պահպանվածությունը դրա հայտնաբերման, առգրավման կամ կալանք դնելու ժամանակ ավտոտրանսպորտային միջոցի զննության մասին կազմված արձանագրության մեջ նշված վիճակում՝ մինչեւ տվյալ ավտոտրանսպորտային միջոցի վերադարձման մասին հարցվող Կողմի իրավասու մարմնի որոշման ուժի մեջ մտնելու պահը,

գրանցման փաստաթուղթ՝ լիազորված մարմնի կողմից ավտոտրանսպորտային միջոցի պետական գրանցման, այդ թվում՝ ժամանակավոր գրանցման մասին փաստաթուղթ,

ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր՝ ավտոտրանսպորտային միջոցը տիրապետելու, օգտագործելու եւ տնօրինելու իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձ,

Կողմի իրավասու մարմին՝ պետական իրավապահ մարմին, որը, սույն Համաձայնագրի համաձայն, լիազորված է հարցումներ ուղարկելու հափշտակված ավտոտրանսպորտային միջոցը վերադարձնելու մասին եւ որոշումներ ընդունելու դրանք վերադարձնելու մասին եւ/կամ, համաձայն ազգային օրենսդրության, իրավախախտման դեպքում իրականացնելու ավտոտրանսպորտային միջոցի հետախուզում, առգրավում կամ կալանում,

հափշտակված ավտոտրանսպորտային միջոցը վերադարձնելը՝ հարցվող Կողմի իրավասու մարմնի որոշման հիման վրա ավտոտրանսպորտային միջոցի հանձնումը ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջը կամ նրա ներկայացուցչին եւ/կամ հարցնող Կողմի իրավասու մարմնին:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը, պահպանելով միջազգային պարտավորությունները եւ ազգային օրենսդրությունները, սույն Համաձայնագրի հիման վրա համագործակցում են ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության հետ կապված հանցագործությունների կանխման, հայտնաբերման, խափանման, բացահայտման, քննության, հետախուզման եւ դրանց վերադարձնելը ապահովելու գործում:

Կողմերը միջոցներ են ձեռնարկում իրենց պետությունների տարածքից հափշտակված ավտոտրանսպորտային միջոցների դուրս տանելը կանխելու ուղղությամբ:

ՀՈԴՎԱԾ 3

1. Կողմերը համագործակցություն են իրականացնում իրենց իրավասու մարմինների միջոցով:

2. Իրավասու մարմինների ցանկը փոխանցվում է մյուս Կողմին սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմի կողմից կատարվելու մասին ծանուցման հետ միասին:

3. Իրավասու մարմինների ցանկում փոփոխությունների մասին Կողմերից յուրաքանչյուրը գրավոր տեղեկացնում է մյուս Կողմին:

ՀՈԴՎԱԾ 4

Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակությունը կանխելու, դրանց հետախուզումը եւ վերադարձնելն ապահովելու նպատակով պետք է օգտագործվեն քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության՝ ինտերպոլի միջոցները, այդ թվում՝ նաեւ գլխավոր քարտուղարության կենտրոնական բազան:

ՀՈԴՎԱԾ 5

1. Կողմերից մեկի տարածքում հափշտակված ավտոտրանսպորտային միջոցի հայտնաբերման, առգրավման կամ կալանման դեպքում այդ Կողմի իրավասու մարմինը նման ավտոտրանսպորտային միջոցի հայտնաբերման կամ կալանման օրվանից քսան օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցում է մյուս Կողմի իրավասու մարմնին, որի վարույթում գտնվում է քրեական գործը:

2. Նման ավտոտրանսպորտային միջոցի մասին ծանուցումը պարունակում է, մասնավորապես, հետևյալ տվյալները, եթե դրանք հայտնի են.

ա) ավտոտրանսպորտային միջոցի մակնիշը, մոդելը, գույնը, արտադրության տարեթիվը եւ տիպը,

բ) իդենտիֆիկացիոն համարը, թափքի, շասսիի եւ շարժիչի համարները,

գ) ավտոտրանսպորտային միջոցի ագրեգատների համարների կամ գույնի փոփոխության մասին տեղեկություն,

դ) գրանցման նշանը, գրանցման փաստաթղթի սերիան եւ համարը, դրա տալու վայրը եւ ամսաթիվը,

ե) ավտոտրանսպորտային միջոցի գտնվելու վայրի, դրա տեխնիկական վիճակի եւ կազմի մասին տեղեկություն,

զ) ավտոտրանսպորտային միջոցը առգրաված կամ հայտնաբերած մարմնի անվանումը,

է) ավտոտրանսպորտային միջոցի պահպանվածությունն ապահովող մարմնի անվանումը, ինչպես նաեւ հեռախոսահամարը, որով կարելի է զանգահարել՝ ավտոտրանսպորտային միջոցը վերադարձնելու հնարավորության մասին տեղեկություն ստանալու համար,

ը) տեղեկություն այն մասին, թե օգտագործվե՞լ է արդյոք ավտոտրանսպորտային միջոցը հանցագործություն կատարելու հետ կապված:

ՀՈԴՎԱԾ 6

Հափշտակված ավտոտրանսպորտային միջոցը առգրաված կամ հայտնաբերած Կողմի իրավասու մարմինները ձեռնարկում են համապատասխան միջոցներ տվյալ ավտոտրանսպորտային միջոցի պահպանվածությունն ապահովելու համար եւ չեն կարող

օգտագործել կամ տնօրինել այն:

ՀՈԴՎԱԾ 7

1. Սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի համաձայն ծանուցում ստացած Կողմի իրավասու մարմինը կարող է հարցում ուղարկել հարցվող Կողմի իրավասու մարմնին՝ ավտոտրանսպորտային միջոցը վերադարձնելու մասին:

2. Հարցումն ուղարկվում է գրավոր եւ պարունակում է, մասնավորապես, հետեւյալ տվյալները.

ա) ավտոտրանսպորտային միջոցի մակնիշը, մոդելը, գույնը, արտադրության տարեթիվը եւ տիպը,

բ) ավտոտրանսպորտային միջոցի իդենտիֆիկացիոն համարը, թափքի, շասսիի եւ շարժիչի համարները,

գ) գրանցման նշանը, գրանցման փաստաթղթի սերիան եւ համարը, դրա տալու վայրը եւ ամսաթիվը,

դ) ավտոտրանսպորտային միջոցի գրանցված սեփականատերը,

ե) քրեական գործի համարը, տվյալներ այն մարմնի մասին, որի վարույթում գտնվում է գործը:

3. Հարցմանը կցվում են, հարցնող Կողմի օրենսդրության համաձայն, ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ նշելով այն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, ում անունով դրանք ձեւակերպված են:

4. Հարցնող Կողմի իրավասու մարմնի կողմից գրավոր ուղարկված կամ հաստատված հարցումը պետք է ստորագրված լինի դրա ղեկավարի կամ նրա տեղակալի կողմից եւ հաստատվի տվյալ մարմնի զինանշանով կնիքով:

ՀՈԴՎԱԾ 8

1. Հարցվող Կողմի իրավասու մարմինը հափշտակված ավտոտրանսպորտային միջոցը վերադարձնելու մասին հարցումը քննում է հարցումը ստանալու օրվանից երեսուն օրվա ընթացքում, կայացնում է համապատասխան որոշում եւ այդ մասին տեղեկացնում է հարցնող Կողմի իրավասու մարմնին:

2. Հարցվող Կողմի իրավասու մարմինը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություն՝ լրացուցիչ ժամկետ սահմանելով այն տրամադրելու համար, սակայն ոչ ավելի, քան քսան օր՝ հարցումը ստանալու պահից:

3. Որպես հափշտակված հաշվառված ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի կապակցությամբ Կողմերի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջեւ վեճեր ծագելու դեպքում դրա օրինական տիրոջ մասին հարցը լուծվում է դատական մարմինների միջոցով՝ համաձայն այն Կողմի ազգային օրենսդրության, որի տարածքում ավտոտրանսպորտային միջոցը հայտնաբերվել կամ առգրավվել է:

ՀՈԴՎԱԾ 9

1. Առգրավված կամ հայտնաբերված ավտոտրանսպորտային միջոցը փոխանցվում է հարցնող Կողմի իրավասու մարմնի կողմից հարցնող Կողմի ներկայացուցչին տրված՝ նրա լիազորությունները հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

2. Չպահանջված հափշտակված ավտոտրանսպորտային միջոցը կարող է ի սեփականություն հանձնվել այն պետության, որի տարածքում այն գտնվում է՝ տվյալ պետության օրենսդրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ 10

1. Կողմերից յուրաքանչյուրն ապահովում է մյուս Կողմից ստացված տվյալների գաղտնիությունը, եթե հարցնող Կողմը անցանկալի է համարում դրանց բովանդակության հրապարակումը: Գաղտնիության աստիճանը որոշում է հարցնող Կողմը:

2. Սույն Համաձայնագրի շրջանակներում ստացված գաղտնի տեղեկությունները երրորդ կողմին փոխանցելու անհրաժեշտության դեպքում պահանջվում է այդ տեղեկությունները տրամադրող Կողմի գրավոր համաձայնությունը:

ՀՈԴՎԱԾ 11

1. Ավտոտրանսպորտային միջոցը վերադարձնելու մասին հարցման կատարումը կարող է մերժվել այն դեպքերում, եթե.

ա) հարցվող Կողմի դատարանի որոշման հիման վրա ավտոտրանսպորտային միջոցը հանձնվում է վերադարձնելու մասին հարցման մեջ որպես տվյալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր չնշված անձին կամ նրա ներկայացուցչին,

բ) լրացուցիչ տեղեկության մասին հարցման պատասխանը չի տրամադրվել սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ժամկետում,

գ) վերադարձնելու մասին հարցումը ուղարկվել է հարցնող Կողմի իրավասու մարմնի կողմից ավտոտրանսպորտային միջոցը առգրավելու կամ հայտնաբերելու մասին ծանուցում ստացվելուց երեսուն օր անց,

դ) առկա են հափշտակված ավտոտրանսպորտային միջոցը վերադարձնելուն խոչընդոտող այլ օրինական հիմքեր:

2. Հարցնող Կողմի իրավասու մարմինը անհապաղ գրավոր ծանուցվում է հարցման կատարումը մերժելու մասին՝ մերժման պատճառների նշումով:

ՀՈԴՎԱԾ 12

1. Ավտոտրանսպորտային միջոցը վերադարձնելու մասին հարցման կատարումը կարող է հետաձգվել, եթե.

ա) ավտոտրանսպորտային միջոցը, որի վերաբերյալ ստացվել է հարցում, վարչական վարույթի, քրեական կամ դատական քննության կապակցությամբ առգրավվում է,

բ) ավտոտրանսպորտային միջոցի, որի վերաբերյալ ստացվել է վերադարձնելու մասին հարցում, սեփականության իրավունքի, առգրավման կամ կալանք դնելու հարցը հանդիսանում է հարցնող Կողմում տրված դատական հայցի առարկա մինչև տվյալ գործով դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը,

գ) Կողմերի ազգային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

2. Հարցվող Կողմի իրավասու մարմինը անհապաղ տեղեկացնում է հարցնող Կողմի իրավասու մարմնին ավտոտրանսպորտային միջոցը վերադարձնելու մասին հարցի լուծումը հետաձգելու մասին՝ սույն հոդվածի 1-ին կետի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 13

1. Սույն Համաձայնագրի համաձայն վերադարձվող ավտոտրանսպորտային միջոցները Կողմերի սահմանները հատելիս ենթակա չեն մաքսային հարկման, հարկերի, ակցիզների, գանձումների եւ այլ վճարումների, եթե ներկայացվում է Կողմերի իրավասու մարմինների կողմից տրված փաստաթուղթ, որը հավաստում է, որ ավտոտրանսպորտային միջոցը վերադարձվում է սույն Համաձայնագրի շրջանակներում:

2. Ավտոտրանսպորտային միջոցը առգրավելու եւ մինչև սեփականատիրոջը կամ նրա ներկայացուցչին եւ/կամ հարցնող Կողմի իրավասու մարմնին հանձնելու պահը պահպանելու հետ կապված ծախսերը կրում է հարցվող Կողմը:

3. Հարցնող Կողմի տարածք ավտոտրանսպորտային միջոցի վերադարձնելու հետ կապված ծախսերը կրում է ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը կամ հարցնող Կողմի իրավասու մարմինը՝ համաձայնեցնելով սեփականատիրոջ հետ:

4. Ավտոտրանսպորտային միջոցի վերադարձնելու հետ կապված ծախսերը ենթակա են հատուցման՝ համաձայն Կողմերի ազգային օրենսդրությունների:

ՀՈԴՎԱԾ 14

Կողմերը դադարեցնում են հափշտակված ավտոտրանսպորտային միջոցի հետախուզումը հետախուզման նախաձեռնող հանդիսացող Կողմի իրավասու մարմնի որոշմամբ:

ՀՈՂՎԱԾ 15

Սույն Համաձայնագրի դրույթները մեկնաբանելիս եւ կիրառելիս ծագող վիճելի հարցերը լուծվում են Կողմերի միջեւ՝ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

ՀՈՂՎԱԾ 16

Կողմերի իրավասու մարմինները ինքնուրույն են կրում սույն Համաձայնագրի կատարման ընթացքում ծագող ծախսերը, բացի սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածում նշվածներից: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարող է համաձայնեցվել այլ կարգ:

ՀՈՂՎԱԾ 17

Կողմերը համագործակցություն իրականացնելիս որպես աշխատանքային լեզու օգտագործում են ռուսերենը:

ՀՈՂՎԱԾ 18

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Կողմերի մասնակցությամբ այլ միջազգային պայմանագրերից բխող նրանց իրավունքներն ու պարտավորությունները:

ՀՈՂՎԱԾ 19

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերից յուրաքանչյուրի՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին ծանուցումը ստանալու օրվանից:

ՀՈՂՎԱԾ 20

Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են դրա անբաժան մաս հանդիսացող առանձին արձանագրությամբ եւ ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 19-րդ հոդվածով նախատեսված կարգով:

ՀՈՂՎԱԾ 21

Կողմերից մեկը կարող է դադարեցնել սույն Համաձայնագիրը. Համաձայնագրի գործողությունը դադարում է դադարեցնելու մասին գրավոր ծանուցումը մյուս Կողմի ստանալու օրվանից վեց ամիս անց:

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

Կատարված է Թբիլիսի քաղաքում, 2006 թվականի հունիսի 2-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, վրացերեն եւ ռուսերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման հարցում տարաձայնություն առաջանալու դեպքում գերակայությունը տրվում է ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2007թ. հունիսի 2-ից:

